

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ  
8-9-րդ դասարան 2015-2016 ուստարի

I. Լրացնել բաց թողնված բառերը (յուրաքանչյուր առաջադրանք 0.1 միավոր-1միավոր):

1. Լեյկոցիտների կյանքի տևողությունը \_\_\_\_\_ օր է:
2. Կերակրի աղի 0.2% լուծույթում էրիթրոցիտները \_\_\_\_\_:
3. Հյուսվածքային հեղուկը կապ է ստեղծում \_\_\_\_\_ միջև:
4. Արյան մակարդումը \_\_\_\_\_ արագացնում է:
5. Թթվածնի և հեմոգլոբինի միացությունն անվանում են \_\_\_\_\_:
6. II խմբի արյունը է պարունակում է \_\_\_\_\_ ագլյուտինոգեն և ագլյուտինին:
7. Մարդու ողնաշարը բաղկացած է \_\_\_\_\_ ողերից:
8. Ուսագոտու ոսկրերն են՝ \_\_\_\_\_ և \_\_\_\_\_:
9. Սրտի բոլորաշրջանի տևում է \_\_\_\_\_ վայրկյան:

II. Գտնել ճիշտ պատասխանը (յուրաքանչյուր առաջադրանք 0.1 միավոր-0.6 միավոր):

1. Ինչպե՞ս է կոչվում մարդու օրգանիզմում պատվաստմամբ առաջացած իմունիտետը:

- 1) բնական բնածին 2) բնական ձեռք բերովի 3) արհեստական պասիվ 4) արհեստական ակտիվ

2. Քանի՞ հատվածից է բաղկացած մարդու ողնուղեղի պոչուկային բաժինը:

- 1) 1 2) 5 3) 8 4) 12

3. Ո՞ր պնդումն է համապատասխանում լյարդի պատնեշային ֆունկցիային:

- 1) այստեղ սինթեզվում և կուտակվում է գլիկոգեն  
2) օրգանիզմի ամենախոշոր արտազատական գեղձն է  
3) կատարում է թունավոր նյութերի վերափոխում 4) արտադրում է լեղի, քայքայում է ծերացած էրիթրոցիտները

4. Օրգանիզմի նշված ոսկորներից որո՞նք են միացած անշարժ:

- 1) ողնաշարի ողներն իրար հետ 2) ծնկոսկրը և սրունքոսկրերը  
3) կրծոսկրը և կողոսկրերը 4) գանգատուփը կազմող ոսկրերը

5. Իմունիտետի տեսակներին վերաբերվող ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) բուժիչ շիճուկից ստացված հակամարմինները պայմանավորում են արհեստական ակտիվ իմունիտետը  
2) պատվաստումից հետո առաջացած հակամարմինները պայմանավորում են արհեստական պասիվ իմունիտետը  
3) ժառանգաբար ստացված հակամարմինները պայմանավորում են բնական բնածին իմունիտետը  
4) պատվաստման միջոցով ձևավորվում է արհեստական պասիվ իմունիտետը

6. Մարդու արյունատար համակարգի նշված տեղամասերից որտե՞ղ է ամենացածր ճնշումը:

- 1) մազանոթներում 2) մանր երակներում 3) սիներակներում 4) մանր զարկերակներում

## Այս մասում ոչինչ չգրել

III. Արյան ձևավոր տարրերը համապատասխանեցրեք նրանց բնութագրերին (ճիշտ պատասխանը 0.2 միավոր):

Ձևավոր տարրեր	բնութագիր
1. էրիթրոցիտ 2. լեյտոցիտ 3. թրոմբոցիտ	ա- Սրանք առաջանում են կարմիր ոսկրածուծում, զուրկ են կորիզից, պարունակում են հեմոգլոբին սպիտակուց, որի շնորհիվ էլ իրականացնում են թթվածնի և ածխաթթու գազի փոխադրում: բ- Ամենափոքրն են, ապրում են 5-7 օր, կորիզ չունեն, մասնակցում են արյան մակարդմանը, դրանցից $1\text{մմ}^3$ –ում 400000 են: գ- անգույն կորիզավոր բջիջներ են, բացի կարմիր ոսկրածուծից կարող են առաջանալ նաև փայծաղում, ուրցագեղցում, և ավշային հանգույցներում, սրանք օրգանիզմը պաշտպանում են օտարածին սպիտակուցներից և մանրէներից: դ- սրանցից որոշները կարող են ներթափանցել միջբջջային տարածություն, մեկ ժամում կլանել 20-30 մանրէ: Բորբոքային պրոցեսների ժամանակ առաջացած թարախը պարունակում է այս ձևավոր տարրերից:

Պատասխան \_\_\_\_\_

IV. Գտնել մակարդման գործընթացի ընթացքի ճիշտ հաջորդականությունը (ճիշտ պատասխանը 0.2 միավոր)

- 1) արյունատար անոթի պատի վնասում
- 2) ֆիբրինոգենի վերածում ֆիբրինի
- 3) արյան պլազմայի մեջ թրոմբինի արտազատում
- 4) թրոմբոցիտների քայքայում
- 5) ֆիբրինի թելիկներից անոթի վնասված մասում ցանցի առաջացում

Պատասխան \_\_\_\_\_

V. Լրացնել շղթաների հաջորդականությունը (յուրաքանչյուր առաջադրանք 0.2 միավոր- 1միավոր- 0.8 միավոր):

ա) բերան – կլան- կերակրափող-

բ) քիթ – քթմական-

գ) պարանոցային ողեր- կրծքային ողեր –

դ) ականջախեցի- անցուղի- թմբկաթաղանթ-

**VI. Պատասխանել հարցերին (յուրաքանչյուր առաջադրանք 0.2 միավոր-0.8 միավոր)**

1. Ի՞նչ է ռեֆլեքսը: Ռեֆլեքսների ի՞նչ տեսակներ գիտեք :

2. Թվարկեք խառը գեղձերը, ո՞րոնք են նրանց գործառույթները:

3. Ի՞նչ ենթաբաժիններ են տարբերակում վեգետատիվ նյարդային համակարգում:

4. Գծապատկերի միջոցով դասակարգել նյարդային համակարգի բաժինները:

**VII. Համեմատել զարկերակների և մազանոթների կառուցվածքային և գործառույթային առանձնահատկությունները (ճիշտ պատասխանը 0.4 միավոր):**